№ 114 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 № 114

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետական լեզուի ուսուցման մանկավարժական հիմքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սասունը պատմական դարերում. Դատաստանական բէֆօրմների հարցը. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դաւաղրութիւն կ. Պոլսում. Բերլինի ունտեր-օֆիցէրների կալանաւորումը. Թիւրքաց կառավարութեան հերքումները. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պիրամիդների աշխարհում.

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՔԸ

—

„Кавказъ“ լրագիրը իր 260-րդ համարում մի առաջնորդող յօդուած է նուիրել քաղաքային դպրոցների կազմակերպութեանը, որի մէջ այն միտքն է յայտնում, թէ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան հաշուով պահվող սկզբնական դպրոցները՝ իրանց հայ, վրացի և ռուս բաժանմունքներով, չեն համապատասխանում ոչ ազգաբնակութեան կարիքներին, ոչ էլ կանոնաւոր ուսման գործին։ Լրագիրը այն կարծիքի է, որ այնպիսի վարչական կենտրոնում, ինչպիսին է Թիֆլիսը, որտեղ միմեանց հետ շփվում են Կովկասում ապրող բոլոր ազգութիւնները—վրացիներ, հայեր, թուրքեր, լեռնականներ, այսորիներ, օսեր, յոյներ, գերմանացիներ և այլն, իրանց փոխադարձ յարաբերութիւնների համար պէտք ունեն մի ընդհանուր լեզուի, և այդ լեզուն պէտք է լինի պետական ռուս լեզուն։

Այդ տեսակէտը ընդունելով իբրև հիմք, լրագիրը գտնում է, որ ազգային սկզբնական դպրոցներ բանալը և այն էս միայն հայ, վրացի և ռուս դպրոցներ, ոչ թէ կը միացնի Կովկասի ազգութիւնները, այլ աւելի մեծ խորութիւն և բաժանում կը դցի նրանց մէջ։ Իսկ միւս կողմից՝ այդ տեսակ դպրոցները հակառակում են և արգարութեան, որովհետև, շարունակում է լրագիրը, ի՞նչ իրաւունքով քաղաքը պէտք է դպրոցներ բանայ ռուսների, հայերի և վրացիների համար, իսկ միւս ազգութիւններին արգելի այդ տեսակ դպրոցներ ունենալը։

Ռուս լրագիրը իր խօսքերը վերջացնում է նրանով, որ հասարակական վարչութեան վայել չէ նեղ ազգայնական տեսակէտի վրա կանգնել և թէ երեխաները կը սովորեն միմեանց յարգել հոգեկան արժանաւորութիւնների և ոչ այս կամ այն ազգութեան պատկանելուն համար, և այդ ոչ թէ ազգայնական դպրոցներում, այլ սկզբնական ընդհանուր, այսինքն պետական դպրոցներում։

Ահա այն բոլոր փաստաբանութիւնները, որ „Кавказъ“ լրագիրը անում է ապացուցանելու համար, թէ Թիֆլիս քաղաքը չը պէտք է ազգայնական սկզբնական դպրոցներ ունենայ, այլ միայն ընդհանուր սկզբնական դպրոցներ։

Մենք թոյլ ենք տալիս մեզ չը համաձայնվել լրագրի արտայայտած այդ կարծիքի հետ։

Հայ, վրացի, թուրք մանուկները կը սովորեն ռուս լեզուն անհամեմատ աւելի շուտ, աւելի հիմնաւոր, երբ այդ լեզուի տարրերը աւանդվեն նրանց մայրենի բարբառով, երբ նրանց արդէն ծանօթ կը լինեն իրանց մայրենի լեզուի քերականական տարրերը։

Խօսք չը կայ, որ կայսրութեան բազմացեղ և բազմալեզու ազգութիւնների համար ընդհանուր լեզուն պէտք է լինի պետական ռուս լեզուն. տարակոյս չը կայ, որ այդ բոլոր ազգերը պէտք է իմանան ռուս լեզուն և այդ լեզուն իմանալը ոչ թէ միայն նրանց բարոյական պարտականութիւնն է, իբրև քաղաքացիների, այլ և ուղղակի նրանց օգուտը։

Բայց հէնց հարցը նրանումն է, թէ ինչպէս անել, որ մանուկների վերաբերմամբ ռուս լեզուի դասաւորութիւնը բացիօնալ հիմունքների վրա դրված լինի. իսկ միակ բացիօնալ հիմքը, կրկնում ենք, որի վրա պէտք է հիմնել ամեն առարկայի և լեզուի ուսումը ժողովրդական սկզբնական դպրոցներում՝ մայրենի լեզուն է։

Ինչ վերաբերում է այն կէտին, թէ անարդարութիւն է ունենալ սկզբնական դպրոցներ միայն ռուսների, հայերի և վրացիների համար և զրկել միւս ազգութիւնները այդ իրաւունքից, մենք միանգամայն համաձայն ենք ռուս լրագրի հետ, որ քաղաքային վարչութեան կողմից, արդարև, մեծ անարդարութիւն կը լինէր, եթէ միայն ճիշդ լինէր, որ Թիֆլիսում ուրիշ ազգութիւնները—Թուրքերը, այսորիները, լեռնականները, օսերը, յոյները այնքան մեծ կօնտիգէնտ են կազմում, որ կարելի էր նրանց համար առանձին դպրոցներ ունենալ։

Այդպէս է պահանջում, կրկնում ենք, նոյն իսկ պետական լեզուի աջող ուսուցման գործը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ

—

Յայտնի հայագէտ Մ. Էմին, իր «Վարդան Մեծի ընդհանուր պատմութեան» գրքի ռուսերէն թարգմանութեան ծանօթութեան մէջ, խօսելով Սասունի մասին, ասում է հետևեալը.

«Սասուն, կամ աւելի ճիշդը Սանասուն, Մեծ Հայաստանի Աղձնիք գաւառի շրջանն է, այժմեան Վանի փաշալիքութեան մէջ։ Սասունի բնակիչները բաղկացած են քրդերից և հայերից, որոնք ոչ մի իշխանութիւն չեն ճանաչում և ապրում են անկախ Տաւրոսի անմերձենալի տեղերում։ Ինճիճեան հաւատացնում է, որ սասունցի հայերը խօսում են մի այնպիսի լեզուով, որ շատ նման է հին հայոց լեզուին, որ պահպանվել է գրքերում։ Թովմա Արծրունին, տասերորդ դարի մատենագիրը, թողել է մեզ հետաքրքիր մատրամատութիւններ սասունցիների կեանքի և նրանց ծագման մասին։ Աւելորդ չենք համարում առաջ բերել այդ կտորը նրա գրուածքից, որը, յուսով ենք, հետաքրքրութեամբ կը կարդան մեր ընթերցողները։

Ահա թէ ինչ է գրում սասունցիների մասին Թովմա Արծրունին, սրանից մօտ 900 տարի առաջ։

«Կամենում եմ մի քանի խօսքերով նկարագրել Խութ (Տաւրոսի ճիւղը) լեռան բնակիչների յատկութիւնը, բնաւորութիւնը, բարքերը, նրանց ծագումը և այն, թէ որպիսի ծանր աշխատանքով են նրանք բաւարարութիւն տալիս իրանց ամենաանհրաժեշտ պահանջներին։

«Նրանք ապրում են խորը հովիտներում, լեռների կիրճերում, խիտ անտառներում և լեռնային բարձրութիւնների վրա. ապրում են առանձին և ցեղ ցեղ, և միմեանցից այնպիսի հեռաւոր տարածութեան վրա են գտնվում, որ մի ուժեղ մարդու աղաղակը բարձր տեղերից հազիւ է հասնում մինչև այդ բնակարանները և այն էլ, որպէս մի խուլ արձագանք։

«Իրանց բնակութեան տեղի հեռաւորութեան պատճառով շատերը նրանցից մոռացել են իրանց մայրենի լեզուն. նրանք միմեանց հանդիպում են որպէս օտարներ, խօսում են աղքատ լեզուով, որի օգնութեամբ նրանք դժուարութեամբ են արտայայտում իրանց մտքերը. յաճախ բանն այնտեղ է հասնում, որ նրանք դիմում են թարգմանի օգնութեանը, որպէս տարբեր ծագումի մարդիկ։

«Նրանք կերակրվում են հատիկներով և գլխաւորապէս կորեկով, որին սովի ժամանակ նրանցից մի քանիսները հաց են անուանում. ցանում են կորեկը անտառների արանքներում գտնվող դաշտերում, նախապէս երկատամեան թիերով փորելով հողը և խնամքով ոռոգելով։

«Մերկութիւնը ծածկելու համար նրանք բըրդեայ շորեր ունեն. իրանց ոտնամանները նրանք յարմարեցնում են այծի կաշուից. ամառ և ձմեռ միատեսակ հագուստ ունեն և մէկ տեսակ կերակուր են ուտում։ Նրանց զէնքը բաղկացած է նիզակից, որ նրանք միշտ կրում են իրանց վրա՝ լեռներում ապրող գազանների պաշտպանվելու համար։ Իսկ երբ թշնամին յարձակում է գործում նրանց երկրի վրա, այն ժամանակ այդ բոլոր լեռնականները միաբան գալիս են իրանց իշխաններին օգնութեան, որոնց նրանք շատ անձնուէր են։

«Երբ ամպերից սկսում է թափվել մեծ ձիւն, նրանք փոկերով կապում են իրանց ոտներին

*) Մի քանի հանգամանքների պատճառով «Պիրամիդների աշխարհում» յօդուածների շարքը ընդհատվեց և թէև մի փոքր ուշ, բայց և այնպէս աւելորդ չենք համարում շարունակել լրացնել այդ ճանապարհորդութեան նկարագիրը, որ տեղի ունեցաւ 1893 թ-ին, ամառը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻՐԱՄԻԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

—

Շարունակում եմ նկարագրել իմ ճանապարհորդութիւնը փարաւոնների աշխարհում։ *) Բայց շարունակելով, ես երբէք մտադիր չեմ նկարագրել Եգիպտոսը, բառիս բուն նշանակութեամբ։ Ինչպէս նկատում է յայտնի լեհացի գրող Սէնկէվիչ, որը նոյնպէս ճանապարհորդել է Եգիպտոսում, այդ նկարագրութիւնները այնքան շատ են, որ նրանցից կարելի է մի երկրորդ Ալէքսանդրեան գրադարան կազմել։ Ոչ, ես կը հաղորդեմ միայն իմ ստացած անմիջական տպաւորութիւնները, ուրիշ ոչինչ։

Կիրակի օր է, յուլիսի 18-ին. Ալէքսանդրիայի ամբողջ հայ կօլոնիան եկել խռնվել է հայոց եկեղեցու և առաջնորդարանի բակը՝ այցելելու Էջմիածնից եկած հրաւիրակներին։ Հայոց եկեղեցին և առաջնորդարանը գտնվում են քաղաքի կենտրոնում և շինված են մօտ 100,000 ռուբլի արժողութիւն ունեցող մի դեռնի վրա. այդտեղ դեռեղված են և երկու սեռի դպրոցները։

Տեսնելով Ալէքսանդրիայի հայերին, որոնք գաղթականներ են Թիւրքիայից եկած, մեծ մասամբ Զմիւռնիայից, պարզ համոզվում էք, թէ ազատութիւնը մինչև ո՞ր աստիճան կերպարանափոխում է մարդուն։ Վախկոտ, քծնող, շողոքորթ տաճկաստանցի հայը, ըր ձեռք է բերել այդ յատկութիւնները թրքական դարևոր ստրկութեան տակ, 10—15 տարվայ ընթացքում, ազատ և արդարադատ օրէնքների շնորհով, կերպարանափոխվել և դարձել է համարձակ, ազատ, իր համոզմունքները, քաղաքական և բարոյական կարծիքները ճակատը բաց և անվեհեր քարոզող քաղաքացի։

Հայերը Եգիպտոսում բաւական պատուաւոր դիրք են ձեռք բերել և բարոյական լաւ համբաւ և անուն են վայելում։ Նրանց մէջ կան շատ հարուստներ, կառավարչական ծառայութեան մէջ մինչև մինիստրի աստիճանները հասած անձինք, ճարտար փաստաբաններ և եւրոպական վաճառականական աշխարհում նշանաւոր առևտրականներ։

Վայելելով ամենայն ազատութիւն, նրանք ըստանում են զանազան երկիրներում հրատարակվող հայ լրագիրներ և նոյն իսկ այնպիսիները, որոնց մի հատը Թիւրքիայում այժմ բաւական է համարվում հային դէպի բանտ և կախաղան տանել։

—Բայց ինչպէս են թոյլ տալիս ձեզ ստանալ այդ հակաթրքական և նոյն իսկ յեղափոխական թերթերը, հարցնում ենք մենք. չէ՞ որ Եգիպտոսը սուլթանի գերիշխանութեան ներքոյ գտնվող մի երկիր է և խեդիվը մի վասալական իշխան։

—Այո, պատասխանում էին մեզ, բայց մենք կառավարվում ենք անգլիական օրէնքներով, որոնք թոյլ են տալիս ամեն մի մարդու ազատ, համարձակ յայտնել իր կարծիքները, համոզմունքները. բաւական է, որ դուք խօսքից դէպի գործ չանցնէք և պետական կարգը, օրէնքները խանգարող գործունէութիւններ չը կատարէք։ Ահա ձեզ Եգիպտոսում հրատարակվող լրագիրները,—արաբերէն, ֆրանսերէն և անգլերէն լեզուներով. տեսէք մի քանիսը ինչ խիստ լեզու են բանեցնում Անգլիայի վերաբերմամբ, ինչ հայհոյանքներ են թափում Ալբիոնի որդկերանց գլխին, բայց ոչ ոք նրանց չէ արգելում։

Ես ճշմարիտ, առնում ենք մեր ձեռքը Կայրէում հրատարակվող արաբերէն լեզուով մի թերթ. մեզ թարգմանում են նրա բովանդակութիւնը, որ մօտաւորապէս հետևեալն է. «ով Ալբիոնի խորամանկ գաւակներ, ինչ էք ուզում մեզանից, եգիպտացիներից. դուք հիւր եկաք մեզ մօտ և այժմ ուզում էք տիրանալ մեր երկրին. դուք կործանեցիք, աւերեցիք մեր երկիրը, դուք խլեցիք մեր անկախութիւնը. վերջապէս ժամանակ է, որ ձեր խոստումը կատարէք և հեռանաք, եթէ ոչ Ալլահի անէծքը ձեր և ձեր երկրի գլխին կը թափվի»։

Մի այլ թերթ, անգլօֆիլ, պատասխանելով արաբական թերթին ասում է. «ինչ էր Եգիպտոսը անգլիացիների մտնելուց առաջ և ինչ է այժմ։ Առաջ նա մի արևելեան բռնապետական իշխանութիւն էր, մի երկիր էր, որի տնտեսական և ֆինանսական ոյժերը բոլորովին ջլատված էին. բուն ժողովուրդը, ֆէլլահները, դրաստի հաւասար արարածներ էին նկատվում. բախշիշի սիստէմը կառավարչական ընդհանուր սիստէմն էր դարձած։ Այսօր, տասնամեայ կարճ շրջանում, երկիրը ահագին յեղափոխութիւն է կրել. տնտեսական, ֆինանսական ոյժերը բարգաւաճել են. կեանքի, գոյքի, պատուի կատարեալ ապահովութիւն կայ. ֆէլլահը տէր է իր ստացուածքի, իր աշխատանքի. բախշիշի սիստէմը անխնայ հալածվում է։ Բայց երկրի այդ կերպարանափոխութեան համար ահագին զոհեր է տուել անգլիացին, ուստի նա չէ կարող հեռանալ, մինչև խորապէս չը համոզվի, որ իր ստեղծած գործը չի փչանայ և կը շարունակվի։ Կատաղեցէք ինչքան կամենաք, մեր ոյժը—մեղ համակրող ժողովուրդն է։»

Համարեա ամեն օր դուք կարդում էք եգիպտական լրագիրներում այդ տեսակ թեր և դէմ յօդուածներ։ Անգլօֆոբ լրագիրները երբեմն մինչև անգամ ամենաանպատկառ լեզու են գործածում, բայց անգլիական կառավարութիւնը այնու ամենայնիւ մամուլին կատարեալ ազատութիւն է շնորհել, որովհետև այդ ազատութեան շնորհիւ ամեն բան պարզվում է, ամեն մարդ կարող է գնահատել այդ յօդուածների բուն արժէքը և նշանակութիւնը։ Այն բոլոր կերպարանափոխութիւնից յետոյ, որ կրել է երկիրը անգլիական տասնամեայ տիրապետութեան կարճ շրջանում, այն կարգերը, որոնք այսօր իշխում են այդ երկրում, դէպի անգլիացիներն են գրաւել ժողովրդի ամբողջ համակրութիւնը։

Եւ բոլոր արտաքին թելադրութիւնները, հայրենասիրական զգացումներին ուղղած կոչումները՝ թօթափելու օտարի լուծը—ոչ մի ազդեցութիւն չեն գործում Եգիպտոսի ժողովրդի և մանաւանդ ֆէլլահների վրա։ Նախ, այդ ֆէլլահը հազարաւոր տարիներից ի վեր կրել է օտարների լուծը

փայտոտներ օղակների ձևով, որոնց օգնութեամբ ձիւնի վրա ման են գալիս, որպէս չոր գետնի վրա։

«Նրանք գաղանային բարքեր ունեն. նրանք արիւնարբու են և նրանց համար դատարկ բան է սպանել հարազատ եղբօրը և մինչև անգամ անձնասպանութիւն գործելը։

«Նրանք բոլորը միատեսակ զէնք են կրում և արագաշարժ են իրանց յարձակումների մէջ. ապրում են Աղձնիքի և Տարօնի մէջ գտնվող լեռան վրա, և իրանց աղաւաղված և անհասկանալի լեզուի պատճառով, խութ են կոչվում. այդտեղից է և լեռան խոյթ անունը։ Նրանք անգիր գիտեն սաղմոսը հայ վարդապետների հին թարգմանութեամբ և միշտ անգիր են ասում այդ սաղմոսները։

«Դրանք այն մարդիկն են, որոնք մի ժամանակ կազմում էին Ասորեստանի և Նինուէի թագաւոր Սենեքերիմի որդիներից՝ Ադրամելէքի և Սանասարի սվիտան, որոնք իրանց առաջնորդի անունով կոչվում են Սանասեաններ։ Նրանք ընդհանրապէս հիւրասէր են, սիրով ընդունում են օտարականներին և ամեն տեսակ յարգանք են ցոյց տալիս նրանց»։

«Հայ պատմագրի այդ խօսքերից,—ասում է Էմին,—կարող ենք եզրակացնել, որ Սասունի բնակիչները Ասորեստանի գաղթականներ են, որոնց գաղթեցրել են Քրիստոսից վեց դար առաջ Սենեքերիմի Ադրամելէք և Սանասար որդիքը, հայոց թագաւոր Տիգրան I-ի ժամանակ։ Այդ գաղթականների մասին յիշում են և մի քանի ուրիշ պատմագիրներ, ասելով թէ Ադրամելէք և Սանասար, իրանց հօր սպանութիւնից յետոյ, փախան Հայաստան»։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՐԷՖՕՐՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

—

Ինչպէս յայտնի է Պետերբուրգում կազմված է մի յանձնաժողով դատաստանական բէֆօրմների համար, որոնց մենք մի քանի յօդուածներ նուիրեցինք «Մշակի» մէջ, և կը շարունակենք, որքան պայմանները թոյլ կը տան, կրկին վերադառնալ այդ հարցին։

Այդ բեֆօրմների առիթով պահպանողական «Новое Время» լրագիրը գրում է հետևեալը. «Վաղուց արդէն թէ կառավարական և թէ հասարակական շրջաններում դատաստանական բէֆօրմների պահանջ էր զգացվում։ 1864 թուի օրէնսդրութեան համարեա ոչ մի բաժին չէ մնացած, որ մինչև օրս համեստ փոփոխութեան ենթարկված չը լինի. իսկ դատաստանական վարչութեան մէջ խոշոր վերանորոգութիւն մտցնելու գաղափարը վիճակված էր արդարադատութեան այժմեան մինիստրին։

«Մեր դատաստանական ապագայ բէֆօրմի հարցով, ինչպէս յայտնի է, զբաղված են չորս յանձնաժողովներ։ Գարնանը նրանք արդէն զումարվում էին, շուտով աշնանը ևս կը սկսեն աշխատել։ Ըստ սովորութեան, յանձնաժողովների պարտքը կը լինի կարգի բերել բոլոր նիւթերը։ Այն նիւթերը, որ կային յանձնաժողովներ կազմելուց առաջ, արդէն կարգի են բերված և հրատարակված են եօթ հատորներով. իսկ նորը դեռ հում նիւթի ձևով է։

«Մինիստրութիւնը առաջարկեց իր բոլոր պաշտօնեաներին, ուշադրութիւն չը դարձնելով ոճի և ձևի վրա, գրել անկեղծութեամբ այն բոլորի մասին, ինչ որ նրանց կարծիքով սխալ և վնասակար է այժմեան դատաստանական կարգերի մէջ։ Ի նկատի առնելով, որ պակասութիւններ շատ են հաւաքվել, և որ դատաստանական աշխարհում հաւատում են նոր մինիստրի եռանդին և աշխատութեանը, յոյս կայ, որ այդպիսի նիւթերի մեծ առատութիւն կը լինի։ Այդ բոլորը մշակելու և կարգի դնելու համար շատ աշխատանք և շատ ժամանակ կը պահանջվի։ Բայց դա միայն քանդելու շրջանն է, իսկ յետոյ էլի ժամանակ է հարկաւոր նորը չինելու և ստեղծելու համար, երբ յանձնաժողովները կը սկսեն խորհրդի հրաւիրել էկսպերտներին՝ սկսած նախագահներից մինչև երդուեալ հաւատարմատարները։

«Ահա թէ ինչու բոլոր տեղեակ մարդիկ կարծում են, որ յանձնաժողովների աշխատութեան ամենակարճ ժամանակամիջոցը երեք տարի է։ Եթէ դրան աւելացնենք էլի մի տարի, որ կը պահանջվի օրինագիծը օրէնք դարձնելու համար, այն ժամանակ ընդամենը չորս տարի կը պահանջվի բէֆօրմները իրագործելու համար։ Մինչև այդ ժամանակ որոշված է չը յարուցանել դատաստանական պրակտիկայի որ և է խոշոր հարց ոչ այստեղ, և ոչ Սիբիրում»։

ՆԱՄԱԿ ԴՈՒԲԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 28-ին

Սեպտեմբերի 25-ին, Դուբայի կլուբում, 12 աւազակներին ձերբակալելու առիթով, այստեղի ատիճանաւորները և ժողովրդի բոլոր դասակարգերի ներկայացուցիչները մի փառաւոր ճաշկերոյթ տուեցին այդ գործի հերոսներին։ Նուագում էին հուսարի զինուորական գնդի երաժշտական խումբը և սազանդարները։

Կլուբի բոլոր սենեակները բռնված էին հանդիսականներով. ճաշին ներկայ էին և կանայք։ Ճաշի ժամանակ ճառեր խօսեցին. մի թուրք մի ուղերձ էր պատրաստել թուրքերէն։ Տեղական փաստաբաններից մէկը, շնորհաւորելով գործած քաջութիւնը, դիմեց գաւառապետ Եաղիկովին, որը Պետերբուրգի զինուորական կօրպուսի նախկին ուսուցիչ դասատիարակ է եղել, հետևեալ խօսքերով. «Շնորհաւորելով ձեզ ձեր փառաւոր յաղթութեան համար, ես հոգով և ամբողջ սրտով ցանկանում եմ ձեր նոր պաշտօնի մէջ անսպառ եռանդ և գործունէութիւն։ Ես գգվում, փայփայում եմ մի միտք, որ դուք մեր հողը-երկիրը սիրէք այնպէս, որպէս ձեր դպրոցը, իսկ մեզ սիրէք, որպէս ձեր աշակերտներին»... Գաւառապետը իր ճառով ակնարկեց, որ նա հանդիսականներին ոչ թէ աշակերտներ է համարում, այլ իր մտերիմ ծանօթներ և բարեկամներ, և խըմում է նրանց կենացը։ Ապա առաջարկեցին Բաղուի Նահանգապետի կենացը, և իսկոյն այդ մասին հեռագրեցին նրան Բաղու։ Հետևեալ օրը նահանգապետից ստացվեց հեռագիր, որի մէջ նա շնորհակալութիւն է յայտնում և յուսով է, որ քանի որ այստեղի ծառայողները ժողովրդի հետ սերտ բարեկամութիւն են անում, ապագայում այլ ևս չեն յայտնվի աւազակային խմբեր Դուբայի գաւառում։

Երեկոյեան պարեր եղան և տևեցին մինչև առաւօտեան ժամի 4-ը. հիւրերը շատ ուրախ տրամադրութեան մէջ ցրվեցին։ Մենք չենք յիշում Դուբայում այդպիսի ուրախ մի հանդէս։

Ի դէպ. ցանկալի է, որ մեր նոր գաւառապետ Եաղիկով Բաղուի Նահանգապետի հետ միասին աշխատէին և դիմէին կառավարութեան, անցկացնելու համար գաւառի միջով երկաթուղու գիծ, որը մեծ կարևորութիւն ունի թէ այստեղի և թէ ամբողջ գաւառի արդիւնաբերութեան համար։

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ուսումնարանական յանձնաժողովը հոկտեմբերի 2-ին մի խորհրդակցական նիստ կազմեց քաղաքային դպրոցների հարցի առիթով։

—

Երևանեան նահանգի երկաթուղու գծի համար եղող հետազօտութիւնները շուտով կը վերջանան։ Համարեա վճռված կարելի է համարել այն գծի ուղղութիւնը, որ տանում է դէպի Զաւալ-Օղլի և Փամբակ։ Երկաթուղին երկու տարվայ ընթացքում կատարելապէս պատրաստ կը լինի։

—

Սեպտեմբերի 30-ին, ուրբաթ գիշերը, Թիֆլիսի Պէսկովսկայա փողոցի վրա քանդվեց մի երկյարկանի հին տուն։ Անցորդները և ոստիկանները, լսելով սարսափելի ճայթոց, վազեցին քանդվող տան բնակիչներին օգնութիւն հասցնելու։ Քանդված տան փլատակներից հանեցին զանազան հասակի վեց երեխաներ, որոնք սաստիկ վնասված և այլանդակված էին, բայց դեռ կեանքի նշոյներ ունէին. ապա հանեցին մի կնոջ արդէն սառած դիակ։ Թիֆլիսի Նահանգապետի հրամանով փորուածքները շարունակվում էին ամբողջ գիշերը և հետևեալ օրը. քանդված ախոռատան տակ գտնվեցին երկու սպանված ձիաներ, որոնք պատկանում էին տանտէր Մարկովին։ Փորուածքներն այժմ ևս շարունակվում են։

—

Մինիստր Երմօլով արդէն Բաղուից ճանապարհ է ընկել դէպի Անդրկասպեան երկիրը։

—

Հոկտեմբերի 2-ին քաղաքային դումայի դահլիճում կայացաւ մի նախապատրաստական ժողով, մասնակցութեամբ մի խումբ հայ գրողների և ուսուցիչների։ Ժողովը, Ա. Արասխանեանցի նախագահութեամբ, սկսեց քննել գրողներին և մանկավարժներին օգնող ընկերութեան կանոնադրութեան նախագիծը։ Այդ ժողովում նախագծի միայն մի քանի յօդուածները քննվեցին. շարունակութիւնը պէտք է քննվի յաջորդ ժողովներում։

—

Մեզ հեռագրում են Բաթումից, հոկտեմբերի 3-ից. «Կարա-Մուրզա այստեղից գնում է Գանձակ՝ խումբ կազմելու համար»։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. Ախալցխայից, Ներսէս Իգիթխանեանի միջոցով 3 ռուբլի, որ աւելացած է Խորէն Ստեփանէի եպիսկոպոսանալու առիթով Ախալցխայից ուղարկած բազմաստորագիր շնորհաւորական հեռագիրների փողից։ Ուրեմն նախկին 3551 ր. 26 կ. հետ այժմ ունենք 3554 ր. 26 կ.

—

Քամոյենց եկեղեցու ծխականների խնդիրքի համաձայն, Վեհափառ Կաթողիկոսը այդ եկեղեցու միաբան Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանին կոնդակով շնորհել է խաչ կրելու իրաւունք։ Յովհաննէս քահանան յայտնի է Թիֆլիսում իբրև արժանաւոր հոգևորական և ինչպէս յայտնի է 11 տարի վարում էր բարեկարգչի պաշտօնը։ Լսում ենք, որ մի քանի ուրիշ քահանաներ, որոնց անուանացուցակը մեզ յայտնի չէ, նոյնպէս ստացել են խաչ կրելու իրաւունք, բայց ոչ թէ ժողովրդի, այլ առաջնորդի խնդիրքի համաձայն։

—

Մոսկվայի հնագիտական ընկերութեան հրատարակութեան մէջ տպագրված է Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցէնտ Լևոն Մսերեանցի մի փոքրիկ հետազօտութիւնը Վանի բեւեռագրերի մէջ պատահող պիլի բառի մասին։ Նրա կարծիքով այդ բառը և վրաց լե-

---

և հաղարաւոր փոփոխութիւններ է տեսել. ոչ մի փոփոխութեան ժամանակ նրա դժնդակ վիճակը չէ բարւոքվել։ Փարաւոնների ժամանակ դեռ, 4—5 հազար տարի առաջ, նրա ճակատից դառն քրտինք էր հոսում պիրամիդներ կառուցանելու համար. մահմետականութեան տիրապետութեան ներքոյ Եգիպտոսի արգաւանդ հողը նա մշակում էր կիզիչ արևի տակ էմիրաների, շեյխերի, փաշաների, մամլուքների համար. նա ծառայում էր իբրև գրաստ, իսկ այժմ նա դադարել է, գէթ իրաւագիտապէս, գրաստ լինելուց. այժմ նա վայելում է իր ճակատի քրտինքի, իր հալալ աշխատանքի գէթ մի մասը. այժմ ոչ ոք չի համարձակվի նրան ծեծել, ճիպոտի տակ մեռցնել. այժմ նոյն իսկ փաշան չի համարձակվի նրան վիրաւորել. այժմ նա կարող է բողոքել և արդարադատութիւն գտնել, և այդ բոլորը անգլիացու շնորհով։

Ճշմարիտ է, նա այժմ ևս ծանր հարկեր է վճարում և իր ձեռքով մշակած հողի արդիւնքի 6/8 մասը կառավարութեան է տալիս, բայց գոնէ 2/8-ի տէրն է։ Բացի դրանից նա շատ լաւ գիտէ, նրան հասկացրել են, որ այդ դրութիւնը երկար չի տևի. ծանր հարկերը ստացվում են այժմ նրա համար, որ նախկին խէդիվների արած սարսափելի խոշոր պարտքերը, պարտքեր, որոնք հասցրել են Եգիպտոսը սնանկութեան, վճարվեն, և երբ այդ պարտքերը վերջանան, ժողովրդի վիճակը ևս կը թեթևանայ։ Բացի դրանից փէլլահը տեսնում է, որ այդ հարկերը գործ են ածվում երկաթուղիներ, ջրանցքներ, դպրոցներ և այլ հիմնարկութիւններ չինելու համար։

Եւ ճշմարիտ, Եգիպտոսը, որ ճնշվում էր իր ծանր պարտքերի տակ, այսօր այնքան բարգաւաճել է ֆինանսական և տնտեսական տեսակէտից, որ ոչ միայն վճարում է իր պարտքերը, այլ և առանց դէֆիցիտի է փակում իր բիւդժէտը։ Եւ դեռ ամեն օր կառուցանում են այնպիսի չինութիւններ, որոնք հիացման արժանի են։ Այսպէս օրինակ, Ալէքսանդրիա քաղաքը խմելու լաւ ջուր չունէր. խմում էին Նեղոսի կեղտոտ ջուրը, բայց ահա 2—3 տարի է, անգլիացիները մի մեծ զտարան են չինել քաղաքի գլխին, մի բարձրաւանդակի վրա, որտեղ հաւաքելով լայն և մեծ աւազանների մէջ Նեղոսի ջուրը, որ բերում են ջրանցքներով, շոգեմեքենաների և ճախարակների միջոցով, զտում են ջուրը և յետոյ խողովակներով բաժանում ամբողջ քաղաքին։ Մենք գնացինք նայելու այդ հոյակապ ձեռնարկութիւնը, որ միլիոներ է նստել և որ մատակարարում է քաղաքին մաքուր, զտված, անվնասակար ջուր։

Եւ ահա այդ տեսակ ձեռնարկութիւնների, աւազոտ անապատների միջով երկաթուղիներ, ջրանցքներ անցկացնելու վրա Անգլիան զործ է դնում Եգիպտոսի եկամուտները, վճարելով և նախկին ահագին պարտքերը, պահելով լաւ, կազմակերպված զօրք և 10—12 տարվայ ընթացքում այնպէս կարգաւորել է ֆինանսական վիճակը, որ երկիրը այժմ առանց դէֆիցիտի է փակում իր բիւդժէտը։

Բնական է, որ Անգլիան զրգռում է իր դէմ նախկին հարստահարիչների, կողոպտողների և յափշտակիչների զայրոյթը, երբ տեսնում են, որ այլ ևս կռփել, յափշտակել, հարստահարել չեն կարող, այլ միայն մնում է «լալ և կրճտել ատամանց»։

Այստեղ պէտք է նկատենք, որ չը նայելով այդ բոլորին, Եգիպտոսում ժողովուրդը կամ ֆէլլահը այնու ամենայնիւ դեռ գտնվում է սարսափելի աղքատութեան մէջ։ Դարևոր հարստահարութիւնները այնքան ծծել, մաշել, սպառել են ժողովրդի բոլոր ոյժերը, հիւթը, որ դեռ շատ տարիներ ահագին ջանքեր պէտք են գրաստայրած ժողովրդին մարդավայել կերպարանք տալու։

Սակայն անգլիական տիրապետութեան մի բնորոշ յատկանիշն ևս այն է, որ նա անտեսանելի է, չէ շօշափվում և կառավարում է աներևոյթ ձեռքով։

Այցելելով Եգիպտոսի քաղաքները դուք ամեն տեղ տեսնում էք, որ բոլոր կառավարչական պաշտօնեաները, ոստիկանները, մինիստրները — տեղացիներ են, արաբներ, հայեր, յոյներ, ղըպտիներ, թուրքեր։ Ամեն բան կատարվում է, ամեն հրաման արձակվում է խեդիվի անունով։

Ըստ երևոյթին ամեն բան տնօրինողը, լիազօր հրամանատարը խեդիվը և նրա նախարարներն են։ Գրագրութիւնը, խօսակցութիւնը դատարանների, վարչական հաստատութիւնների մէջ կատարվում է տեղական, արաբական լեզուով, բացի խառն կամ միջազգային դատարանների մէջ, որտեղ դատավարութիւնը լինում է ֆրանսերէն լեզուով։ Օրինակ, Ալէքսանդրիայում, Անգլիայի ներկայութիւնը միակ երևում է այն մի հատ անգլիական պահականոցով (poste), որ գտնվում է քաղաքի կենտրոնում և որտեղ 16—18 տարեկան անգլիացի պատանի զինուորներ, բամբուկէ սաղաւարտներով, հրացանները ձեռքին պահակութիւն են անում։

Անգլիան կառավարում և տիրում է Եգիպտոսը, այսպէս ասած, կաբինէտում նստած։ Ամեն մի մինիստր ունի մի օգնական sous-secrétaire, ստատս-սէկրէտար, այդ օգնականը անգլիացի է և նա է, իսկապէս, մինիստրը։ Նա է հսկում մինիստրութեան գործերի վրա, կարգադրում, տնօրինում, վճռում, բայց դուրսը, ի ցոյց մարդկան, ամեն բան կատարվում, ամեն հրաման արձակվում է եգիպտական մինիստրի անունով։ Բուն տնօրինողը, կատարողը աներևոյթ է մնում։ Ահա գաղտնիքը։

Իսկ ապստամբութեան երեսից իրան ազատելու համար Անգլիան ահա ինչ է արել։ Նախ, Ալէքսանդրիայի նաւահանգստի մուտքում, ծովի տակ, մեծ պատերազմական տօրպէդներ է շարել և այդպիսով որ և է պատերազմական նաւային արշաւանք անհնարին է դարձրել. երկրորդ՝ Կայիրէում, Եգիպտոսի մայրաքաղաքում, քաղաքի վրա թագաւորող միջնաբերդում շարել է անգլիական թնդանօթները, որոնց ահռելի բերանները բացել է քաղաքի վրա և դրել է անգլիական գարնիզօն։ Եւ այս միջոցներով բոլորովին ազատվացրել է իրան։

Իսկ նրա բարոյական մեծ զօրութիւնը կայանում է նրանում, որ երկրի քաղաքացիական կառավարութիւնը, արդարադատութեան գործը յանձնել է տեղական տարրին, իսկ ինքն հանդիսանում է լոկ վերին հսկող և երկրի բէսուրսները գործադրում է երկրի բարօրութեան ու զարգացման վրա և զարկ է տալիս տնտեսական բարգաւաճման։

(Կը շարունակվի)

զուի միլի բառը համանիշ են և մի և նոյն ծագումն ունեն։ Իբրև ապացոյց առաջ են բերված լեզուաբանական նմանութիւններ և պրոֆեսոր Մարրի վկայութիւնը, թէ նոյն բառը գտնվում է և Անիի արձանագրութիւնների մէջ։

—

Էջմիածնից, հոկտեմբերի 1-ից, «Новое Обозрѣніе» լրագրին հեռագրում են հետևեալը. «Այսօր, առաւօտեան 11 ժամին, պատարագից յետոյ, Ներսիսեան դպրոցի ներկայացուցիչների նախաձեռնութեամբ և միաբանութեան ներկայութեամբ, Անանիա եպիսկոպոսը հանդիսաւոր հոգեհանդիսատ կատարեց Ներսիսեան դպրոցի հիմնադիր արժանայիշատակ Ներսէս V կաթողիկոսի գերեզմանի վրա»։

—

Թիֆլիսի քաղաքային դուման, սեպտեմբերի 30-ի նիստում, վճռեց մի սիֆիլիտական հիւանդանոց բանալ Նաւթլուղում, տղամարդկանց համար։

—

Նաւթարդիւնաբերողների համագումար ժողովը Բաքուում, ինչպէս հաղորդում է «Моск. Вѣд.» լրագիրը, կը բացվի հոկտեմբերի 15-ին։

—

Հրատարակչական ընկերութեան տպագրութեամբ լոյս տեսաւ Կ. Պոլսի հայոց բանաստեղծ Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը և գրուածքների քննադատութիւնը։ Գրքի հեղինակն է Կ. պոլսեցի գրականագէտ Արշակ Չօպանեան։ Գրքի մասին կը խօսենք միւս անգամ։

—

Մեզ հաղորդում են Աբարանից, որ այնտեղի հունձի անաջողութեան պատճառով գիւղացիները շատ ծանր վիճակի մէջ են։ Գիւղացիները յոյս ունէին այս տարվայ եկամուտից վճարել անցեալ տարվայ ընթացքում արած պարտքերը, բայց այժմ ստիպված են նոր պարտքերի տակ ընկնել, որպէս զի հաց ունենան ուտելու։

—

Այս տարվայ հետազօտութիւնները ցոյց տուին, որ ֆիլօկսերը օրից օր տարածվում է Թիֆլիսի Նահանգի Գորի գաւառում և երկիւղ կայ, որ նա մի քանի տարուց յետոյ պէտք է մտնի նոյն իսկ Կախէթի խորքերը։

—

Ստացանք պրոֆէսոր Հերման Կլէնկէի «Մայր» անունով գրքոյկը, թարգմանութիւն Նազիկեանի։ Գրքոյկի նիւթն է՝ յղի կնոջ ֆիզիքական դրութիւնը, հիւանդութիւնները, դրանց պատճառները, բուժելու միջոցները։ Գրքոյկը տպված է Կ. Պոլսում, բաղկացած է 106 երեսից և արժէ 3 ղրուշ։

—

Ցայտնի պրոֆէսոր Լէսհաֆթը դիմել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, խնդրելով թոյլատրութիւն՝ հիմնելու Պետերբուրգում բիօլոգիական լաբորատորիա, որտեղ պէտք է պահվեն ջրային և ցամաքային կենդանիներ՝ գիտական հետազօտութիւնների համար։ Այդպիսի մի հիմնարկութեան համար արդէն պատրաստ կայ մի տուն՝ 150,000 բուբլու արժողութեամբ, և բացի դրանից 200,000 բուբլի փող։ Լուսաւորութեան մինիստրութիւնը իր կողմից ծախս չը պէտք է անէ։ Այդ հանգամանքը հեշտացնում է թոյլատրութեան խնդիրը։ Մինիստրութիւնը մեծ համակրութեամբ է վերաբերվում այդ կարևոր հիմնարկութեան, որի բացակայութեան պատճառով երիտասարդ գիտնականները ստիպված են իրանց ուսումնասիրութիւնների համար գնալ արտասահմանեան գիտական կենտրոնները։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց այս օրերս Բաղուի «Արօր» տպարանից լոյս տեսած մի նոր գիրք, որի վերնագիրն է «Ամուսնական տարակուսանքներ», աշխատութիւն Գաբրիէլ Առաքելեանի։ Գրքի նիւթը վերին աստիճանի հետաքրքրական է, որովհետև վերաբերում է մի այնպիսի կենսական խնդրին, ինչպիսին է ամուսնական հարցը։ Դա իսկապէս մի քննադատութիւն է, որ գրված է Արիստակէս եպիսկոպոսի «Ամուսնական խնդիրների» և դրա դէմ եղած քննադատութիւնների առիթով։ Մենք կը վերադառնանք այդ գրքին մի առանձին յօդուածով։

—

Արգելված է «Одесскія Новости» լրագրի հատով ծախելը։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 25-ին Գասպարեան անկեանոցի դահլիճում տեղի ունեցան ծխական նոր ընտրութիւններ։ Պէտք է ընտրվէին «Եկեղեցաց խորհրդարանի» չորս անդամներ, երկու փոխանդամ և նոր երէցփոխ։ Ժողովը բազմամարդ էր։ Ընտրութիւնները ընդհանրապէս աջող կարելի է համարել։ Ընտրվողների մեծ մասը բարձր զարգացումով և ինտելիգէնտ մարդիկ են,—մի քանիսը նորաւարտ երիտասարդ համալսարանականներ։ Անաջող պէտք է համարել միայն երէցփոխի ընտրութիւնը։ Սակայն այդ անաջող ընտրութիւնը պէտք է վերագրել մասամբ պատահականութեան, որովհետև ժողովում քիչ մարդ էր մնացել, երբ երէցփոխի ընտրութիւն կատարվեց, և մասամբ էլ այն հանգամանքին, որ մի քանի յարմար և հասարակութեան մէջ կշիռ ունեցող երէցփոխացու անձինք առհասարակ հրաժարվում են այդ ծանր ու պատասխանատու պաշտօնն ստանձնելուց»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 24-ին Գէորգեան ճեմարանը տօնեց իր գոյութեան քսանամեայ տարեդարձը։ Շաբաթ, օրը պատարագից յետոյ, հոգեհանդիսատ կատարեցին Գէորգ Դ. կաթողիկոսի գերեզմանի վրա. յետոյ միաբանութիւնը և ժողովուրդը խմբվեց ճեմարանի բակը՝ ներկայ լինելու հանդիսին։ Հանդէսը բաց արեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանը. «Ո՛վ սուրբ Գէորգ» շարականից յետոյ ճեմարանի տեսուչ Կոստանեան մի ճառ ասեց, որի մէջ ողջունելով նախ միաբանութեանը, ապա ժողովրդին՝ ուրախութիւն յայտնեց, որ ճեմարանը բոլորել է 20 տարին և շնորհաւորեց նրա 21-րորդ տարեմուտը։ Խօսեց ճեմարանի նպատակի մասին, կրկնելով այն միտքը, թէ ճեմարանը պէտք է տայ կրթված վարդապետներ, քահանաներ և ուսուցիչներ։ Իսկ հաշի մասին այսքանը ասեց. «Հաշիւ չեմ կարող տալ. միւս տարի, եթէ Աստուծով այստեղ կը լինեմ, կը գաք և կասէք. մնաս, տուր քո հաշիւը»։ Տեսչի ճառից յետոյ աշակերտները երգեցին քառաձայն «Ո՛հ զի չըքնաղ» երգը. երգից յետոյ Մեսրոպ արքեպիսկոպոսը ասեց մօտաւորապէս հետևեալը. «Մեր տեսուչը շատ լաւ խօսեց. Աստուած ճեմարանը հաստատ պահի. ասէք ամէն. սաներին և միաբանութեանը երկար կեանք տայ. ասէք ամէն» և պահպանիչով փակեց հանդէսը, որը, պէտք է խոստովանած, անցաւ շատ անշուք և սառը կերպով։ Երեկոյեան հրավառութիւն կար»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ գաւառից հաղորդում են «Кав. сельск. хозяйство» շաբաթաթերթին հետևեալը. «Սեպտեմբերի 6-ին, գիշերը, ամբողջ գաւառում տեղի ունեցաւ մի կատաղի մրրիկ, որ մանաւանդ սաստիկ էր լեռներում։ Այդ մրրիկը պատճառ եղաւ ի միջի այլոց 4000 գլուխ ոչխարի կորստեան։ Երբ սկսվեց մրրիկը, Յովսէփեան անունով մէկի հովիւները բարեաղ համարեցին իրանց 4000 գլուխ ոչխարները իջեցնել Բօրչալուի գաւառում վարձած Քարվանսարա անուանած արօտատեղը։ Մրրիկի սաստկութիւնից նրանք կորցրին ճանապարհները և յանկարծ դուրս եկան մի խորխորատի առաջ։ Ոչխարներից մի քանիսը, որ պատահմամբ առաջ էին գնացել, ընկան ներքև։ Նրանց հետևեց ամբողջ հօտը։ Եւ յանկարծ, մի կարճ ժամանակամիջոցում ոչխարատէրերի ամբողջ ութ հազար բուբլու հարստութիւնը կորաւ։ Յաջորդ օրը բանուորներ վարձեցին հարևան գիւղերից՝ ոչխարների կաշիները քերթելու և նրանց ճրագուն ժողովելու համար»։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Կաթողիկոսի օծման տարեդարձի առիթով մօսկվաբնակ Նորնախիջևանցի հայերն այս օրերս ուղարկեցին Վեհափառին 500 բուբլի։ Նրանք վճռել են իրանց մէջ ամեն տարի այդ օրը մի նպաստ ուղարկել Էջմիածին։ Գովելի է Նոր-Նախիջևանցիների այդ ցանկութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՒՄ

—

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Կ. Պոլսում բժշկական դպրոցի ուսանողները մի դաւադրութիւն են կազմել։ Այդ դաւադրութեան մասին Կ. Պոլսից «Times» լրագրին սեպտեմբերի 20-ից գրում են հետևեալ մանրամասնութիւնները։

«Ստամբուլի բժշկական դպրոցի ուսանողների մէջ գաղտնի ընկերութեան բացումը, ինչպէս լսվում է, մեծ տպաւորութիւն գործեց սուլթանի վրա, որը ամենախիստ հրահանգներ տուեց՝ հրկոզութիւնը մեծացնել և ամեն տեսակ հրապարակական ժողովներ արգելել մայրաքաղաքում։ Երկու լաւ յայտնի պարոններին նորերս նախազգուշութիւն տրվեց, որպէս զի նրանք իրանց տանը մեծ ժողովներ չը կազմեն։ Այդ պարոններից մէկը, որը իտալական հպատակ է, կտրական կերպով հրաժարվեց ուշադրութեան առնել այդ նախազգուշութիւնը։

«Գալաթասարայի դպրոցում բացված գաղտնի ընկերութիւնը դաւադրութիւն էր կազմում պետութեան դէմ։ Ընկերութեան բոլոր անդամների մօտ, սուլթանի հրամանով, խիստ խուզարկութիւն կատարվեց, և երիտասարդներից շատերի մօտ գտան արտասահմանում՝ գլխաւորապէս Լիվերպուլում, Մարսէլում և Ժընէվում տպված յեղափոխական լրագիրների կօպիաները։ Այդ բոլոր ուսանողներին խիստ քննութեան ենթարկեցին և ապա բանտարկեցին։

«Քառասուն կալանաւորված ուսանողների թըւում կան և քրիստոնեաներ։ Քննութիւնից յետոյ երեսուն հոգուն արձակեցին, իսկ մնացածները նստած են բանտում և ապա, երևի, կաքսորվեն որ և է հեռու գաւառ։ Ասում են, որ կալանաւորվածներից մէկը յայտնել է, թէ դաւադրութիւնը կազմված էր ոչ թէ սուլթանի սրբազան անձնաւորութեան դէմ, որի վրա ոչ ոք չի համարձակվի ձեռք բարձրացնել, այլ նրա չրջապատողների դէմ, այսինքն վարչութեան դէմ։ Եթէ կառավարութիւնը հարկաւոր կը համարի կալանաւորել բոլոր այդպիսի դաւադիրներին,—աւելացրեց նա,—այն ժամանակ նա ստիպված կը լինի կալանաւորել քաղաքի ազգաբնակութեան զոնէ կէսը»։

ԲԵՐԼԻՆԻ ՈՒՆՏԷՐ-ՕՖԻՑԷՐՆԵՐԻ ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒՄԸ

—

Հեռագիրը արդէն հաղորդեց Բերլինի զինուորական դպրոցի 183 աշակերտների կալանաւորման և նրանց Մագդէբուրգ ուղարկելու լուրը։ Գերմանական լրագիրները հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում այդ անցքի մասին։

«Վերոյիշեալ զինուորական դպրոցը մտնում են մեծ մասամբ այնպիսի անձինք, որոնք 6—8 տարի ծառայել են. ապա այդ դպրոցում երկու տարի դասախօսութիւններ լսելուց յետոյ, ստանում են օբէր-ֆէյրվերկերների աստիճան։ Եւ որովհետև այդ դպրոցի աշակերտները բաւական մեծ կրթութիւն ունեն, այդ պատճառով պարապմունքներից յետոյ նրանք աւելի մեծ ազատութիւն են վայելում, քան զինուորական ուրիշ դպրոցների աշակերտները։ Այդ ազատութեան շնորհով, աշակերտները իրանց մէջ ընկերութիւններ էին կազմում, ուսանողական ժողովների նման, հրատարակում էին թերթիկներ և երգում էին իրանց ժողովների անդամների յօրինած երգերը, որոնց մէջ խիստ կրիտիկայի էին ենթարկում դպրոցի զանազան կարգերը։

«Օգոստոս ամսին փոփոխութիւններ տեղի ունեցան դպրոցի վարչութեան մէջ։ Դպրոցի տեսուչ նշանակվեց մի այնպիսի անձն, որը մինչև այդ օրը դպրոցում չը տեսնված կարգապահութիւն մտցրեց և որի պատճառով աշակերտների մէջ, որոնք սովոր չէին այդպիսի կարգերին, յուզմունք սկսվեց։ Ի միջի այլոց, աշակերտները շատ դժգոհ էին իրանց տնտեսից և սկսեցին զրկել նրան եկամուտներից. օրինակ, ճաշի ժամանակ դադարեցին գարեջուր խմել, որ նրանք պէտք է տնտեսից ստանային և գարեջուրը բերել էին տալիս ուղղակի գարեջրատնից։ Դպրոցի տեսչի և նրա մտցրած կարգերի դէմ դժգոհութիւնը այն տեղը հասաւ, որ մի անգամ, երեկոյեան, երբ դպրոցի տեսուչը անցնում էր բակի միջով, նրա հասցէին սպառնալիքներ լսվեցին և մինչև անգամ աղաղակ՝ «կեցցէ անարխիա»։ Ի հարկէ, դպրոցի տեսուչը կատաղեց դիսցիպլինայի մի այդպիսի խախտման պատճառով։ Անյապաղ, դպրոցում գտնվող բոլոր աշակերտները կալանաւորվեցին և խուզարկութիւններ սկսեցին անել նրանց բնակարաններում։ Գտնվեցին բազմաթիւ թերթիկներ, երգերով և ոտանաւորներով, որոնց մէջ ծաղրի էին ենթարկված դպրոցի տեսուչը, նրա սիստեմը և այլն... Այդ բանի մասին տեղեկութիւններ տրվեցին տեղական զինուորական իշխանութիւններին. հեռագրով տեղեկութիւն տրվեց նոյնպէս կայսրին։ Կայսրը հրամայեց բոլոր ապստամբներին անյապաղ Մագդէբուրգի բերդը տանել։

«Դրանով դեռ գործը չը վերջացաւ։ Հետևեալ օրը, կիրակի, վաղ առաւօտեան ուլանների մի զօրաբաժին կանչվեց, որոնց զօրանոցները գտնվում են ֆէյերվէրկերների դպրոցի մօտ։ Ուլանների այդ զօրաբաժինը կալանաւորեց էլի 20 մարդ։ Դպրոցը համարեա թէ դատարկվեց։

«Ի հարկէ, քաղաքի մէջ այդ բազմաթիւ կալանաւորութիւնները մեծ տպաւորութիւն գործեցին և տաք խօսակցութեան առարկայ դարձան. ասում են, որ անարխիական մի մեծ դաւադրութիւն է բացված։ Բայց, անկասկած, այդ լուրերը չափազանցրած են»։

ԹԻՒՐՔԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՈՒՄՆԵՐԸ

—

Կ. Պոլսից մայրաքաղաքի «Новости» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը. «Բ. Դուռը ուղարկեց Թիւրքաց բոլոր դեսպանութիւններին և միսսիաներին հեռագիրներ, որոնցով հերքում է եւրոպական մամուլի տարածած լուրերը Թիւրքիայի մասին։

«Հերքումներից մէկը ուղղված է քիւրդերի կարծեցեալ արշաւանքների մասին Ռուսաստանի վրա։ Այստեղ ոչինչ տեղեկութիւններ չեն ըստացված այդ արշաւանքների մասին. ռուսաց կառավարութիւնը ոչ մի դիպլոմատիական յայտագիր չէ ուղարկել այդ առիթով։ Մինչև անդամ հակառակ երևոյթ տեղի ունեցաւ. ասիական հայերի բաւական նշանաւոր թիւ, որոնք գաղթել էին Ռուսաստան, կամենում էին Թիւրքիա վերադառնալ։ Բ. Դուռը դէմ կացաւ նրանց վերադարձին և հրամայեց Թիւրքաց սահմանապահ զօրքին կալանաւորել այն հայերին, որոնք կամենում են վերադառնալ միայն յեղափոխական ագիտացիայի նպատակով։ Ռուսաստանը ինքն տեղեկութիւն տուեց Բ. Դրանը, որը անյապաղ համապատասխան միջոցներ ձեռք առաւ։

«Երկրորդ հեռագիրը վերաբերվում է մահմեդականների և քրիստոնեաների մէջ տեղի ունեցած ընդհարմանը Թոքաթում, Փոքր-Ասիայում։ Լրագիրներում փաստական նկարագրութիւններ տրվեցին այդ անցքի մասին։ Հայերը, յիրաւի, չը նայելով իրանց երկչոտութեանը, այս անգամ ցանկութիւն ցոյց տուին կռուի բռնվել, բայց կարգը, այնու ամենայնիւ, շուտով վերականգնվեց։ Թիւրքաց տեղական իշխանութիւնները այդ ժամանակ եռանդոտ պաշտպանութիւն ցոյց տուին քրիստոնեայ ազգաբնակութեանը Թոքատում»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական ներքին գործերի մինիստրութեան մէջ համոզմունք են կազմել, ինչպէս Պարիզից լրագիրներին հաղորդում են, որ անարխիստները հրաժարվել են երկար ժամանակով ներգործական դեր կատարելուց։ Անարխիստները այդ վճիռը կայացրել են գլխաւորապէս Կարնօի սպանութեան պատճառով առաջ եկած ընդհանուր զայրոյթի ազդեցութեան տակ։

—Վիէննայից հեռագրում են, որ Աւստրիան և Գերմանիան դիտաւորութիւն ունեն պատերազմական նաւեր ուղարկել Զինաստան։

—«Times» լրագրի Բերլինից ստացած տեղեկութիւնների համեմատ, Բերլինի զինուորական դպրոցում եղած ապստամբութիւնը աւելի լուրջ բնաւորութիւն ունի, քան թէ նկարագրում է գերմանական կիսապաշտօնական լրագիրը։ Ապստամբութիւնը ոչ թէ պատահմամբ է ծագել, այլ վաղուց նախապատրաստված ծրագրով։ Բացի 183 ունտէր օֆիցերներից, մի քանի գրչնադէրներ ևս կալանաւորվեցին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական բարձր դպրոցներում ուսում առնող բոլգարացիների թիւը տարուց տարի մեծանում է։ Ներկայումս նրանց ամբողջ թիւը 400 է. դրանից 200 սովորում են Մոնպէլիէում, 90-ը Պարիզում, 35-ը Նանսիում, 30-ը Բորդոում, 20-ը—Մարսէյլում և 20—ը Տուլօնում։ Բոլգարացի ուսանողների մեծ մասը սովորում է բժշկութիւն, բնական գիտութիւններ և երկրագործութիւն. շատ քչերն են իրաւաբանութիւն սովորում։

* * *

Կ. Պոլսում գերմաներէն լեզուով շաբաթը երկու անգամ հրատարակվող «Osmanische Post»

լրագիրը 1895 թվին յունվարի 1-ից ամենօրեայ է դառնալու։ Դա մի ապացոյց է, ասում է «Revne d'Orient» լրագիրը, որ գերմաններէն լեզուն սկսում է տարածվել Արևելքում։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 30 սեպտեմբերի։ Վախճանվեց Պետեր Եսնովիչ Գուբօնին։

ԼՕՆԴՕՆ, 30 սեպտեմբերի։ Հոկտեմբերի 8-ին եապօնացիները առան Վիտսու քաղաքը. չինական երկու հազար հոգուց բաղկացած բերդապահ զօրքը փախաւ. չինական բաղմաթիւ զօրքը երևեցաւ Եալուի հիւսիսային ափի վրա։ Եապօնացիները մտադրութիւն ունեն գրաւել Մուկդէնը նոյեմբերի սկիզբներում։ Եապօնիան պարտաւորվեց չը միացնել Կորէյան իր երկրի հետ, բայց Կորէյից նա չի հեռանայ, մինչև որ այդ երկիրը ընդունակ չը հանդիսանայ ինքնավարութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 28-ին Նոցա Կայսերական Մեծութիւնները այցելեցին Մասանդրու և մնացին այնտեղ մօտ մէկ և կէս ժամ։ Թագաւորը տնտղեց իր գեղեցկութեամբ և հարուստ բուսականութեամբ յայտնի տընկարանը։ Լիվադիա վերադառնալու ժամանակ, Եալտայի փողոցները, Բարձրագոյն գնացքին սպասելիս, լցված էին ժողովրդով։

ՏԻԱՆ-ՑԶԻՆ, 30 սեպտեմբերի։ Եապօնական նաւատորմը կատարելապէս թագաւորում է Պէչիլիան ծովածոցի վրա։ Ծովապետ Իտօ համարեա ամեն օր մտնում է Արտուր և Վէյ-Խայ-Վէյ նաւահանգիստները և յատակը չափում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի։ Ֆինանսների մինիստրը վերադարձաւ արտասահմանից։

ՊԱՐԻԶ, 2 հոկտեմբերի։ Այսօր «Opéra» թատրոնում կայացաւ Վէրդիի «Օտէլլո» օպերայի ներկայացումն հասարակութեան ծափահարութեամբ։ Կաղիմիր Պէրիէ յանձնեց Վէրդիին Պատուաւոր Լէգիոնի չքանշանի մեծ խաչը։

ՎԻԵՆՆԱ, 2 հոկտեմբերի։ Ցունաց թագաւորը երէկ ընդունեց ռուս Ֆլիդէլ-ադիւտանտ Բէնկէնդորֆին, որը այսօր ճանապարհ ընկաւ դէպի Կորֆու։—Ռուս լէյբ-վիրաբոյժ Հիրշ այսօր ճանապարհ ընկաւ Լիվադիա։

ԿՐՕՆՇՏԱԴՏ, 3 հոկտեմբերի։ Այսօր վաղ առաւօտեան ծովը գնացին Կայսերական «Պոլիարնայա Զվէզդա» նաւատորմը և կրէյսէր «Վլադիմիր Մոնամախ»։

ԲՈՒԽԱՐԱ, 3 հոկտեմբերի։ Երէկ երկրագործութեան մինիստրը ճանապարհ ընկաւ Սամարկանդ։

ՊԱՐԻԶ, 3 հոկտեմբերի։ Հավրում զօրեղ տրպաւորութիւն գործեց այնտեղ Սաունդէմտօնից եկած չոգենաւի վրա 75 արկղների գտնելը, որոնք պարունակում են ռումբերի նմուշներ, մետալական արկղիկներ պայթող գործիքների համար, հին զէնք, գնտակներ, փամփուշտներ և ուրիշ նիւթեր. այդ արկղները ուղարկված են Anvers Suroise Պարիզի մօտ։ Յայտնի չէ, թէ պատկանում են դրանք անարխիստներին։ Քննութիւն է սկսված։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ
Սեպտեմբերի 30-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	— կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	62 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	90 »
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպոններ — . .	150 »	25 »
Արծաթ — — — . .	— »	— »
Օբրային դիսկոնտ — . .	5 »	7 »
ԵՊտ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա.	94 »	25 »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	50 »
— — երկրորդ —	221 »	— »
Պետական երկաթուղային բէնտա.	101 »	50 »
4½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95 »	75 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	193 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101 »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101 »	25 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	— »
Օդէսայի — —	100 »	50 »
Թիֆլիսի — —	99 »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	100 »	— »
— — Ռոստովի — .	100 »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վներական հիւանդութիւնների։
Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.
Կ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.
Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԹԷՀՐԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Հարկաւոր են մի ուսուցիչ, մի վարժուհի։
Դիմել Բարեգործական ընկերութեան գրասենեակը. Սերգիևսկայա փողոց, Հ. Առաքելեանին։ (№ 112) 3—3

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅՅԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՋԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мириманіана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(№ 35) 14—20

ԱՐՄԱՒԻՐԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ
Ուսուցիչների տեղերը արդէն բռնըված են սեպտեմբերի 3-ից, և ուսումը արդէն վաղուց սկսված է։
Տէր-Յովակիմեան
(№ 112) 3—3

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թվին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ".	25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя"	10 հատը 5 կոպ.
„Театральныя".	
„Флора".	
„Экономныя"	10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ
Հոգաբարձական խորհրդարանում, այս տարվայ հոկտեմբեր ամսի 12-ին, երեկոյեան ժամը 8-ին, լինելու է աճուրդ, առանց կրկնաճրդի, կապալով տալու այժմեան դպրոցի տան ներքնայարկի չորս խանութները, որոնք գտնվում են քաղաքիս 3-րդ մասում, Սօլդատսկի բազարի մօտ, ուր այժմ Խ. Ղալուստեանի մագազինն է, և բերում է տարեկան արդիւնք 1100 ռուբլի։—Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկվայ 10—12 ժամը։ (№ 112) 3—3

УПРАВЛЕНІЕ ЗАКАВКАЗСКОЙ ЖЕЛѢЗ. ДОРОГИ

КОВКАСЕВ ЗАКАВКАЗСКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА ПРИГЛАШАЕТ ПОСТАВЩИКОВ ДРОВ.

Въ 4 часовомъ часу дня 15-го сентября 1894 г. Сверхсмѣтный кредитъ 4.000 куб. саженей дровъ.

Въ 9—12 часовъ утра 26-го октября 1894 г. Лѣсъ 1 часъ пополудни.

Въ 9—2. Лѣсъ 1 часъ пополудни.

Въ 5—7. Лѣсъ 1 часъ пополудни.

(№ 107) 5—5

доводитъ до свѣдѣнія гг. лѣсопромышленниковъ и лѣсоторговцевъ, что для надобностей дороги въ 1895 году потребуется поставить 4.000 куб. саженей дровъ.

Лица, желающія взять поставку въ полномъ объемѣ, или часть поставки, приглашаются прислать свои заявленія въ канцелярію начальника дороги не позже 12 часовъ дня 26-го октября, или подать лично въ засѣданіе общаго присутствія, имѣющаго быть въ тоже число въ 1 часъ пополудни.

Заявленія должны быть въ запечатанныхъ конвертахъ съ надписью: въ общее присутствіе управленія закавказской желѣзной дороги въ г. Тифлисѣ. «Заявленіе цѣнъ на поставку дровъ».

Въ заявленіяхъ должны быть точно указаны: цѣны, количество, мѣста и сроки поставки заявляемыхъ матеріаловъ, званіе или чинъ, имя, отчество, фамилія и мѣстожительство заявителя.

Желающіе подать заявленія на поставку лѣсныхъ матеріаловъ должны предварительно внести, или прислать по почтѣ въ кассу управленія дороги (по вышеуказанному адресу) залогъ въ размѣрѣ 10% съ суммы стоимости по цѣнѣ заявленія, причемъ квитанціи во внесеніи залоговъ, или подлинныя почтовыя расписки, должны быть приложены къ заявленію.

Послѣ окончательнаго разсмотрѣнія въ засѣданіи общаго присутствія всѣхъ заявленій тѣмъ лицамъ, за коими не осталась поставка дровъ, залоги будутъ возвращены; остальнымъ-же залоги будутъ засчитаны въ залогъ при заключеніи договора на поставку.

Касса управленія дороги открыта для пріема залоговъ съ 10 часовъ утра до 2 часовъ пополудни, ежедневно, кромѣ воскресныхъ и праздничныхъ дней.

Одна треть потребныхъ дровъ должна быть выставлена и сдана управленію дороги не позже 1-го мая, одна треть не позже 1-го іюня и одна треть не позже 1-го сентября 1895 года.

Управленіе дороги предоставляетъ себѣ право выбрать поставщиковъ изъ числа лицъ, заявившихъ желаніе принять поставку, не руководствуясь при этомъ наиболѣе низкою цѣною.

Рѣшеніе общаго присутствія управленія дороги подлежитъ утвержденію управленія казенныхъ желѣзныхъ дорогъ.

Подробныя условія поставки дровъ можно получать ежедневно въ конторѣ матеріальной службы (Тифлисъ, Михайловская улица, домъ Эминова), съ 10 часовъ утра до 3 часовъ пополудни, за исключеніемъ воскресныхъ и праздничныхъ дней.

Иногородніе поставщики благоволятъ, для сокращенія времени, затребовать кондиціи по телеграфу, съ точнымъ указаніемъ, какія именно дрова они желаютъ ставить.

Примѣчаніе. Заявленія на дрова дожны боть подаваемы не менѣе, какъ на 300 кубическихъ саженей. 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը. Ծօվիանօվների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 31—32

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Октября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.